

մոլորությունների մեջ անգամ՝ անկեղծ ու անմիջական: Սկզբունքային է ամեն ինչում: Չի սիրում պարծենկոտ տգիտությունը և միամիտ խորամանկությունը: Ատում է քծնանքը: Քծնանքով Ջահուկյանի սիրտը շահելու հույսը տապ անապատում հյուսիսային գովություն ակնկալել է նշանակում: Խուսափում է անպետող բանավեճերից, առավել ևս՝ բանակոչից: Ամեն ինչ, նույնիսկ քննության օրենքները նրա կենցաղում ստորադասված են և ծառայում են գիտական աշխատանքի շահերին: Լեզվի խրճատության օրենքը օրենք է նրա համար նաև կյանքում: Նա հոգատար է այն ամենի նկատմամբ, ինչ ստեղծված է մարդկային աշխատանքով: Վաղուց նյութական դժվարություն չունեցող գիտնականը մի ազնիվ սովորությամբ չգրված թղթի փոքրիկ կտորն անգամ դեռ չի նետում՝ գտնելով դրա օգտագործման տեղը նույնպես: Չի սիրում շքեղություն, արտաքուստ ուշադրություն գրավող ո՛չ կահույք, ո՛չ իր, ո՛չ նույնիսկ զգեստ: Նախընտրում է հագնել գունազարդ հասարակ վերնաշապիկներ: Չի սիրում նյութական մանր-մուճր գործարքներ. խուսափում է ուշադրություն շեղող, միտք զբաղեցնող կենցաղային մանրուքներից: Տալիս է այն, ինչ տալիս է անվերադարձ. ինչ պիտի վերադարձվի, աշխատում է չտալ կամ պարզապես չի տալիս, առանց քաղաքավարական սեթևեթանքի: Եթե հարցնեք՝ իսկ ո՞ւմ է, ի՞նչ է շատ սիրում, կասե՛մ՝ կյանքը և գիրք: Կենսասեր և կենսախիմիո աճճնավորություն է Գ. Ջահուկյանը: Ունի իր սիրած ժողովրդական երգը: Դա «Այլ բլուզիդ մեռնեն...» երգն է, որ մտերիմների միջավայրում ուրախ տրամադրության պահերին շահելության տարիների հուզմունքով, թող որ երբեմն, երգում է անվանի գիտնականը: Սրամիտ ու սրախոս, հաճելի գրուցակից է նա: Վարակիչ ծիծաղ ունի. ծիծաղում և ծիծաղեցնում է իր

ունկնդրին: Գիտելիքների պես անսպառ են նաև Գ. Ջահուկյանի պատմած անեկդոտների պաշարները: Համով պատմող է: Պատմում է ինքնամոռացությամբ և նույն անեկդոտը հարյուրերորդ անգամ պատմելուց հետո էլ այնպիսի հրճվածք է ապրում, որ բոլորովին չի շտապում մաքրել ուրախության առատ արցունքներով ողողված դեմքը: Եվ ովքե՞ր են նրա պատմած, երբեմն էլ հորինած անեկդոտների հերոսները: Դրանք հոգնած գիտնականին զվարճացնող դիմջ միամիտներ են, ճարպիկ հնարամիտներ և, առավելապես, ազատ վարքի տեր, հրապուրիչ կանայք:

Վերջացնելուց առաջ նաև ասե՛ք, որ իբրև գիտության մարդ՝ Գ. Ջահուկյանը հենու է այժմ շատ տարածված մասնագիտական ու թեմատիկ ամեն կարգի շահարկումներից: Նա փառքի հետևից վազելու կարիք չունի: Բայց, ցավոք, միշտ չէ, որ փառքը ինքը գալիս և գտնում է տիրոջը, էլ չենք ասում, որ գնալով շատանում են սուտ փառաբանվողները: ՀՆՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ջահուկյանը վաղուց պիտի զբաղեցրած լիներ Խորհրդրդային Միության ակադեմիայի ակադեմիկոսի իր աթոռը, որը, մեր կարծիքով, թափուր է և սպասում է տիրոջը:

1990 թ. ապրիլի մեկին կյանքի 70 տարին բոլորած գիտնականը, միշտ հեռու ցուցադրական կեցվածքից ու ամբիսային ժողովրդայնությունից, համեստորեն շարունակում է իր գիտական սխրանքը՝ ի բարօրություն հայագիտության լայն ու խոր անդաստանի: Եթե գիտության մեջ ընդհանրապես կա անսահմանություն, ապա Գևորգ Բեգլարի Ջահուկյանը հայ լեզվաբանության հավերժի փոքրաթիվ ուղեկիցներից է, թեև այսօր մեր կողքին, իր պարզ ու հասարակ «այլ բլուզի» մեջ:

Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԼՆԵՍԱԶՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնը [գիտական ղեկավար՝ ՀՆՍՀ ԳԱ ակադեմիկոս էգ. Բ. Աղաջան, վարիչ՝ բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Գ. Մաղոյան (1969—1985 թթ. նույն պաշտոնը վարել է դոց. էմ. Ա. Պիվազյանը)], որն ունի միջֆակուլտետային պրոբլեմային լաբորատորիայի կարգավիճակ, կազմավորվել է 1969 թվականին, համալսարանի նախկին ռեկտոր, ակադ. Մ. Գ. Խոսիտյանի նախաձեռնությամբ: Լաբորատորիայի (այսուհետ՝ հայագիտական կենտրոն) կազմի մեջ մտնում են՝ ա) պատմաբանասիրական հետազոտությունների խումբը, բ) Հայաստանի տեղաձուլման քառաբանագրական խումբը, գ) ԽՍՀՄ ժողո-

վարդների գրական կապերի քաժե՛ր [վարիչ՝ բանասիրական գիտությունների թեկնածու Ն. Ա. Գուշար (1969—1985 թթ. այդ պաշտոնն զբաղեցրել է դոց. Ղ. Վ. Այվազյանը)] և հայ-վրացական բանասիրության խումբը: 1970 թվականից հայագիտական կենտրոնի կազմի մեջ էր նաև հնագիտական հետազոտությունների արշավախումբը, որը 1986-ին միավորվեց պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնին:

Հայագիտական կենտրոնի նպատակն է համախմբել մայր բուհի համակիտար ֆակուլտետների, համապատասխան ամբիոնների, հասարակագիտական տարբեր միավորների և առանձին գիտնականների գործունեությունը, իզ-

բաղվել հայ ժողովրդի պատմության, մշակույթի և գրականության ուսումնասիրությանը՝ համաշխարհային ֆալսեթներից Միության ժողովուրդների պատմության, մշակույթների ու գրականության հետ սերտ առնչությամբ:

Իր գոյության երկու տասնյակ տարիների յնթացում կենտրոնը լույս է բերում բազմաթիվ ուսումնասիրություններ. բարգավաճաբար կամ բնագրերով վերահաստատակել է դասական հայագետների տասնյակ հետազոտություններ, հայ ժողովրդի պատմության, մշակույթի, գրականության, լեզվի և գրական փոխհարաբերությունների վերաբերյալ կենտրոնի աշխատակիցների ուժերով ստեղծել է մի ֆանի արժեքավոր մեծագույնություններ:

Համագործակցելով համալսարանի, հանրապետության և նրա ստեղծողներից դուրս ապրող հայագիտության տարբեր բնագավառների մասնագետների հետ՝ կենտրոնն ստեղծում է նոր, համակողմանի ուսումնասիրություններ: Նման համագործակցության արդյունք է ակադ. Մ. Գ. Ներսիսյանի ընդհանուր խմբագրությամբ 1972 թ. լույս տեսած «Հայ ժողովրդի պատմության» միհատորյակը (հեղինակներ՝ Գ. Խ. Սարգսյան, Մ. Ս. Տերմյան, Կ. Ս. Խոզովերդյան, Մ. Գ. Ներսիսյան, Ա. Գ. Աբրահամյան), որն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարի 60-ական թվականները:

Կարևոր է նաև «Հայ մշակույթի նշանավոր գործիչներ» հանրագիտական բնույթի ժողովածուն, որտեղ ընդգրկված են 5—18-րդ դարերի հայ պատմագրության, իմաստասիրության, իրավագիտության, մարեմատիկայի, գեղարվեստական գրականության, մանրակարչության, բժշկագիտության և այլ բնագավառների հիսունվեց ակադեմիկոսների կազմակերպչների դիմակարգերը՝ առանձին հոդվածներով:

Արդյունավետ գործունեություն է ծավալել կենտրոնը դասական հայագետների այն աշխատությունների վերահրատարակության ուղղությամբ, որոնք այսօր էլ պահպանում են իրենց գիտական բարձր արժեքը: Գրանցից են Ն. Աղսեղի «Հայաստանը Հուսիսեհանսուի դարաշրջանում» (Ռուսերեն, 1971), Հ. Մանանդյանի «Տիգրան Բ և Հուսիս» (1972 թ.), Ն. Աղսեղի «Հայկական հարցի լուծման շուրջը» (1990), Մ. Չամչյանի «Պատմափուն Հայոցը» երեք հատորով (1985), որի վերահրատարակվել է առաջին հրատարակության (Վենետիկ, 1784) 200-ամյա հոբելյանի առթիվ: Արժեքավոր հրատարակություններ են Հր. Անտոյանի «Բանասիրական ուսումնասիրություններ» (1976), Ա. Մելիքի «Հայագիտական հետազոտություններ» (1978), Գ. Տեր-Մկրտչյանի «Հայագիտական ուսումնասիրություններ» երկու գրքով (գիրք 1-ին, 1979), Ստ. Մալխասյանի «Բանասիրական հետազոտություններ» (1981) ժողովածուները, որոնցում գեղեցիկ է բազմապատակ հայագետների տարբեր տարիներին գրած և պարբերական մամուլում տպագրած հոդվածները, ուսումնասիրու-

թյունները, գրախոսությունները, այլ նյութեր:

Շուտով լույս կտեսնեն գերմանացի նշանավոր լեզվաբան Ցոզեֆ Կարստի «Կիլիկյան հայերենի պատմական փերականությունը» (թարգմ. Գ. Սիլվենյակ), Մալխասյանի «Ազգապատմություն», «Հովսեփ Էմիլի կյանքն ու արվածները», Ցոհան Լեփարտի «Գերմանական և Հասարակական 1914—1918 թթ.», ինչպես նաև Ցրիտյոֆ Նանսենի, Ցոզեֆ Սարժիգովսկու, Բ. Գեմբարսկու և անվանի այլոց աշխատությունները՝ հայերեն թարգմանությամբ:

Կենտրոնն զգալի ուշադրություն է դարձնում կարողային բառարանների և տեղեկատու-մատենագիտական գրքերի հրատարակությանը: Լույս են տեսել Հր. Անտոյանի «Հայերեն արվեստական բառարան» շուրս հատորները (1971—1979), Գ. Արեւիկյանի, Խ. Սյուրմեյանի և Մ. Ավերյանի «Նոր բառգիրք հայկական լեզուի» երկու հատորները (1979—1981), Ալ. Խոզովերդյանի «Բառարան ի հայկական լեզուի ի ռուսաց բարբառ»-ի երկու գրքերը (1986—1987), Ա. Սուխասյանի և Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը» (1975): Պատրաստ է և շուտով լույս կտեսնի պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեյի «Հայ-վրացերեն առանձին բառարանը»:

Կենտրոնն իրականացնում է հայ մատենագրության հուշարձանները ուսուցիչ և օտարալեզու ընթերցողներին ներկայացնելու կարևոր գործը, հրատարակվել են 13-րդ դարի նշանավոր պատմիչ և օրենսգետ Ամբատ Սպարապետի «Դատաստանագիրք» (Ռուսերեն, 1980) և Մեսրոպ Մաշտոցի կենսագիր Կորյունի «Վարդ Մաշտոցի» ֆենական բնագիրը՝ աշխարհաբար, ռուսերեն և անգլերեն թարգմանություններով հետո մեկ գրքով (1981), որին կցված են ակադ. Մ. Արեւիկյանի «Մեսրոպ Մաշտոցի և հայ գրի ու գրականության սկիզբը» ուսումնասիրությունն ու նույն հեղինակի «Առաջաբանը» նույնպես երեք լեզուներով:

Կենտրոնն սկսել է հայ և այլազգի հայագետներին նվիրված կենսամատենագիտությունների թողարկումը: Արդեն պատրաստ են Վ. Լանգուայի, Ն. Յարկայի, վրացի հայագետներ Ի. Աբուլադի և Իվ. Շիրակաձեի կենսամատենագիտությունները: Կազմվել են նաև «Ժուռնալ Ազատիկ» արևելագիտական հանդեսի 1822—1985 թթ. (կազմող կրտսեր գիտական աշխատող է Ղուկասյան), «Հավկազ» թերթի (1846—1918 թթ.) հայագիտական նյութերի (կազմող՝ Ա. Բարսեղով, Քրիլիո) բնութագրական մատենագիտությունները, որոնք մասն են կազմելու «Հայագիտությունը Ֆրանսիայում», «Հայագիտությունը Լեհաստանում», «Հայագիտությունը Հունգարիայում», «Հայագիտությունը Ռուսաստանում», «Հայագիտությունը Վրաստանում» մատենաշարի: Մրանց հիման վրա էլ մոտ ապագայում կստեղծվեն հայագիտության պատմությանը նվիրված համահավաք ուսումնասիրություններ: Այս մեծածավալ և տարողունակ աշխատանքներին իրենց ներդրումը կունենան

նախաձեռնման էր Երևանի և խորհրդային տարբեր հանրապետությունների մի շարք հայագետներ, հատկապես նրանք, ովքեր իրենց գիտական մկրտությունն ստացել են մեր կենտրոնում կամ համալսարանի բանասիրական ֆակուլտետում:

Հայագիտական կենտրոնի պատմաբանասիրական հետազոտությունների խումբը զգալի ադրյուն է հասել հայ հին և միջնադարյան գրականության ու արվեստի ուսումնասիրման գործում: Այդ բնագավառի արժեքավոր աշխատություններից է Ա. Գ. Մազոյանի «Միջնադարյան հայկական պոեմը» մեկագրությունը (1985), որտեղ հեղինակը բնութագրում է առում միջնադարյան հայկական պոեմի սկզբնավորման ու զարգացման շրջանները, առարհայում և բնութագրում է գրական այլ տեսակների ու ենթատեսակների հետ ունեցած ազդեցությունը՝ նրանց վրա բռնած և նրանցից հրաժարվող գրականություններով հանդերձ, պատկերացում է տալիս դրանց կառուցվածքային, սյուժետային, զեղարվեստական առանձնահատկությունների մասին, շրջանառության մեջ է դնում ոչ միայն հանրայանը, այլ նաև մասնագետներին սակավ հայտնի կամ անկապին անհայտ զեղարվեստական որոշ երկեր:

Ա. Մազոյանը հեղինակ է նաև «Առաջին Սյունեցի» աշխատության (1987 թ.), որին հաջորդեց բանաստեղծի գլոսիգրոմի «Աղամբի» բնական բնագրի հրատարակությունը (1989), որ հետազոտողը (Ա. Մազոյան) կազմել է Մ. Պոտոյանի հրատարակության և Երևանի, Նուսահիմի, Վիեննայի մատենադարանների բազմաթիվ ձեռագրերի համեմատությամբ:

Ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Լ. Բ. Զուգասյանի «Գրիգոր Մաղկոյ» ուղեատարությունը (1986) նվիրված է 13-րդ դարի հայ խոշորագույն արվեստագետներից մեկի գործունեությանը, նրա նկարագրած «Քարգանջի» նկարաբանի» սյուժեների մանրագրին բնութագրում:

Հայագիտության համար բարձրարժեք աշխատություններից է էմ. Ա. Պիվազյանի «Մխիթար Գոշի «Պատասխանագրի» բանասիրական բնութագրում» մեկագրությունը (1988), ուր հեղինակը պարզաբան է բնագրագիտական և աղբյուրագիտական մի շարք խնդիրներ, սպառնչ պատասխան է տվել վիճամարտյց շատ հարցերի, հանգել համոզիչ և հիմնավոր եզրակացությունների, որով վերջ է դնում այդ նշանավոր երկի շուրջ ցայժմ գոյություն ունեցող տարակարծություններին:

1988 թ. Երևանի համալս. հրատարակչությունը յույս ընծայեց ավագ գիտական աշխատող, բանաս. գիտ. թեկնածու Ե. Զ. Գևորգյանի «Շարժումների լեզու» աշխատությունը, որտեղ բնութագրում են առկված շարժումների լեզվի զրուստուման միջոցները. այն պայմաններն ու պատճառները, որոնց դեպքում խոսողը ինֆորմա-

չիայի փոխանակման նպատակով դիմում է շարժումների լեզվին:

Հայագիտական կենտրոնի գիտական նվաճումներից է Հայաստանի տեղանունների բառարանագրական խմբի պատրաստած «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան» բազմամատուր աշխատությունը: Արդեն տպագրվել են առաջին (1986) և երկրորդ (1988) հատորները: Ընթացքի մեջ է երրորդ հատորը, վերջնական խմբագրման է ենթարկվում չորրորդը: Բառարանն ունենալու է նաև հիեզերող լրացուցիչ հատորը: Բոլոր միասին ընդգրկելու են շուրջ 130 հազ. անուն բառանոցված: Կորոզային այս աշխատությունը պատմական գիտությունների դ-ր, պրոֆ. Ք. Խ. Հակոբյանի (1917—1969), պատմական գիտությունների դ-ր, պրոֆ. Ստ. Տ. Մելիք-Քալաշյանի և բանաս. գիտ. դ-ր, պրոֆ. Հովհ. Խ. Բարսեղյանի մոտ ֆառասուն տարիների աշխատանքի արգասիքն է: Բառարանում մանրամասն տեղեկություններ են տրված վարչական կենտրոնների, նահանգների, գավառների, շենքերի, ավանների և այլ միավորների, դրանց բնակչության ազգային կազմի, նրանց զբաղմունքի, տեսեսության, մշակութային, բուժական հիմնարկների մասին: Լայն տեղ է հատկացված պատմական հուշարձանների և ինժեներահարտարակապական կառույցների նկարագրությանը: Հեղինակներն օգտագործել են ասուրա-քարեթվական, խեթական, հունա-հռոմեական, հայկական, պարսկական, վրացական, ռուսական և այլ լեզուներով պահպանված գրավոր աղբյուրները, մամուլը, հարյուրավոր արխիվային նյութեր, ձեռագրեր, գիտական, զեղարվեստական, տեղեկատու-մատենագիտական գրականություն, տասնյակ ֆարտեզներ և այլն:

Կենտրոնի համակարգում 1970 թ. ստեղծված հայ-վրացական բանասիրության գիտահետազոտական խումբն աշխատում է հետևյալ ուղղություններով՝ հայ-վրաց գրական-մշակութային կապեր, հայ-վրաց լեզվաբանական-բառարանագրական հարաբերություններ:

1983 թ. յույս տեսավ բանաս. գիտ. թեկնածու Հ. Ս. Բայրամյանի «Ալեքսանդր Վրաց հոր գրականության պատմություն (1800—1890 թթ.)» ուսումնաստանողական ձեռնարկը, ուր տրված է 19-րդ դ. վրաց գրականության պատմության սերտ կապն ու հայտնիականությունը (պատրաստ է և շուտով հրատարակության կհանձնվի նույն հեղինակի «Վրաց գրականության պատմություն» բունական ձեռնարկը, որն ընդգրկում է 5—20-րդ դարերը):

Կրտսեր գիտական աշխատող Յ. Է. Զեղդինիսն է Հր. Բայրամյանը կազմել և հրատարակել են համապատասխանաբար՝ «Վրաց գրողները հայ գրականության մասին» (նուսերեն, 1984) և «Հայ գրողները վրաց գրականության մասին» (հայերեն, 1986) նյութերի ժողովածուները: Դրանք յավագույնս վկայում են հայ և վրաց գրողների ուշադրությունը երկու դրկից ժողովուրդների գրականությունների հանդեպ,

ընդգրկում են այն ուսանելին, որ հայ-վրաց գրական անդադրություններում կարելի է մատնանշույց անել իբրև հոգևոր մեծանուն կարևորագույն գրական:

Զգալի աշխատանք է կատարում ԽՍՀՄ ժողովուրդների գրական կապերի բաժինը: Բաժինը «Ռուս դասականները և ԽՍՀՄ ժողովուրդների գրականությունը» մատենաշարով լույս է բնծայել գրքեր՝ նվիրված Պուշկինի, Լեռմոնտովի, Գոգոլի, Լ. Տսլտոյի, Լեյկառովի, Չեխովի, Գորկու, Մայակովսկու և ուրիշների ստեղծագործություններին և խորհրդային ժողովուրդների գրականությունների վրա նրանց ունեցած ազդեցությանը: Մատենաշարի հանձնախմբի մեջ են Երևանի, Քրիլյսիի, Մոսկվայի, Կիևի, Լենինգրադի և Մերձբալթյան համալսարանների լավագույն գիտնականները: Շատ ավելի բազմազգ է հեղինակային կոլեկտիվը. նրա կազմի մեջ մտնում են գրեթե բոլոր միութենական և ինքնավար հանրապետությունների, ինչպես նաև տասնյակ այլ ֆազանների բազմաթիվ մասնագետներ:

Համագործակցելով ԽՍՀՄ ԳԱ ուսուցանողական, ՀԽՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվ. հայ գրականության և Մաշտոցի անվ. ձեռագրերի (Մատենադարան) ինստիտուտների հետ՝ բաժնի ջանքերով հրատարակվել են «Հայ և ուսուցանողական գրականություններ» երկու (Լենինգրադ, 1981, Երևան, 1986) մեծածախ ժողովածուները: Բաժինը ուսուցանողական պարբերաբար լույս է բնծայում նաև «Գրական կապեր» մատենաշարը. հրատարակի վրա են այդ ժողովածուի շուրջ հատորները:

Շատով լույս կոտնելի «Խոսք Երկրի Զարեհի մասին» հոդվածների, հուշերի և էսսեների հարուստ և բազմաթիվ ժողովածուն: Հերթական գրքերը կնվիրվեն Հովհ. Քումանյանին, Գ. Դեմիրճյանին, Ստ. Զորյանին և հայ դասական այլ գրողներին:

1989 թ. հրատարակվել է «Հայ գրականությունը ուսուցանողական և խորհրդային ֆենդատության մեջ» մատենագիտական հետախույզումները:

Նրանում ի մի բերված և համակարգված էյուրոպերը բացահայտում են հայ գրականության նստուս խորհրդային ֆենդատության (Լ. Աննիսկի, Ի. Զոլոտուսկի, Ս. Ռասսադին, Ա. Բաշարով, Ա. Մարչենկո և ուրիշներ) ունեցած կապը: Գրքի առաջարկերը գրել, մատենագիտական ցանկը կազմել (ընդգրկում է 1923—1988 թթ.) և ծանոթագրել է Ն. Ա. Գուրարը:

Հրատարակված գրքերը բոլոր մենագրությունները, ֆենական բնագրերի հրատարակումներն ու ժողովածուներն ունեն տեսական և գործնական հշակունքային. դրանք հարստացնում են հայ գրականագիտության, տեխնոլոգիայի և ազդեցության անդամները:

Հայագիտական կենտրոնն իր ժողովներում և գիտական խորհրդի նիստերում ֆենարկել և բնթաց է տվել շուրջ մեկուկես տասնյակ գրքերի, որոնցից են պրոֆ. Ք. Հակոբյանի «Անի միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք» (ուսուցանողական, 1985) և «Անի մայրաքաղաք» (հայերեն, 1988) աշխատությունները, ՀԽՍՀ ԳԱ բարձրագույն գիտության վստակագործիչ, պրոֆ. Հր. Քամրաջյանի «Գեղարվեստական լեզվի և բովանդակության ճոր ընթացումները հայ միջնադարում», նույն գիտնականի «Հայ ֆենդատություն» (ուսուցանողական, մեկ գրքով) ուսուցանողականը: Որոշակի հետախույզում են ներկայացնում Հովհ. Ղևնդյանյանի «Համալսարանի հրատարակող դասախոսները» (1981), Ռ. Աղայանի «Գրքեր Ղևնդյանյան», Սեյլանի «Ստանուն», Ք. Պողոսյանի «Ջիվանի, հատրետի», «Նյութեր հայ տպագրության պատմության» (հեղինակային կոլեկտիվ) և ուրիշ մենագրություններ, ժողովածուներ:

Կենտրոնի գործունեության մասին բազմիցս զրկատալից հոդվածներ են տպագրվել համալսարանի, հանրապետական, միութենական և արտասահմանի պարբերական մամուլի և գիտական հանդեսների էջերում:

Հ. Ս. ԲԱՅՐԱՄՅԱՆ